# Յուլիսես Գրանթ Ավագ Դպրոց 2018-2019
# Ծնողի եւ ընտանիքի մասնակցության քաղաքականություն

U.S. Grant High School (GHS) մշակել է սույն Առաջին տիտղոսի ծնողների եւ ընտանիքի ներգրավվածության քաղաքականությունը ծնողների օգնությամբ: Ծնողները իրենց երեխաների համար առաջին ուսուցիչներն են եւ ուսումնական ծրագրի անբաժանելի մասը: Ծնողները պետք է ներգրավված լինեն տանը եւ դպրոցում: Բոլոր ծնողները կարիք ունեն տեղյակ լինել իրենց ուսանողի նպատակների եւ դեպի այդ նպատակներին հասնելու ճանապարհների մասին: Գրանտ ավագ դպրոցը ծնողներին ապահովում է մի քանի տարբերակով ներգրավված լինել դպրոցում: Այս քաղաքականությունը մշակվել է եւ համաձայնեցվել է Գրանտ ավագ դպրոցի ծնողների, ուսանողների եւ դպրոցի այլ անձնակազմի կողմից, ինչպես նաեւ Անգլերեն սովորողների խորհրդատվութան հանձնաժողովի (ELAC) եւ Դպրոցի խորհուրդի (SSC) կողմից: Գրանտի ծնողների եւ ընտանիքի ներգրավվածությունը վերանայվում եւ թարմացվում է ամեն տարի, կախված ուսանողների կարիքներից: Այս քաղաքականությունը տարածվելու է այն լեզվով, որով հասկանալի կլինի ծնողներին: Քաղաքականությունը տարածվել է Առաջին տիտղոսի ուսանողների ծնողների միջեւ: Այս քաղաքականությունը ուղարկվել է տներ: Քաղաքականությունը նկարագրում է Առաջին տիտղոսի ծնողների ներգրավվածության հետեւյալ պահանջները իրականացնելու միջոցները [20 USC 6318 Section 1118(c)-(f) inclusive].

<u>Բաժին I : ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ</u>

Որպեսզի ներգրավել ծնողներին U.S. Grant High School դպրոցի Առաջին տիտղոսի ծրագրում, հաստատվել են հետեւյալ աշխատանքները:

- Դպրոցը հավաքում է տարեկան հանդիպում, որպեսզի տեղեկացնի Առաջին տիտղոսի ուսանողների ծնողներին Առաջին տիտղոսի պահանջներին եւ ծնողների իրավունքների մասին ներգրավված լինել Առաջին տիտղոսի ծրագրի մեջ:

- GHS կազմակերպում է տարեկան հանդիպում, հրավիրելով բոլոր ծնողներին դպրոցի Առաջին տիտղոսի ծրագրի մասին տեղեկացնելու համար եւ ծնողների իրավունքի մասին ներգրավված լինել եւ թե ինչպես է Առաջին տիտղոսը օգնում մեր ուսանողներին բարձրացնել առաջադիմությունը:

  o Հրավերք, ֆլայեր, օրակարգ, եւ մուտք գործելու թերթիկներ են ստեղծվում հանդիպման համար:
  o Ուսանողների առաջադիմության ամսաթիվը, Առաջին տիտղոսի (կատեգորիկ) բյուջեները ներկայացվում են եւ քննարկվում:

- Դպրոցը ծնողների համար առաջարկում է հանդիպումների ճկուն քանակ՝ հանդիպումներ առավոտյան կամ
  երեկոյան:

  o GHS-ը կազմակերպում է տարեկան կողմնորոշիչ հանդիպումներ բոլոր 9-րդ դասարան փոխադրվող ուսանողների, նոր գրանցվող ուսանողների եւ ծնողների համար, որպեսզի ծանոթացնել մեր նոր ուսանողներին եւ ընտանիքներին Գրանտի քաղաքականությունների ուսումնական ծրագրերի եւ անձնակազմի հետ:

  o Մենք կազմակերպում ենք կողմնորոշիչ եւ ընտրական հանդպում բոլոր ծնողների համար, տեղեկացնելով նրանց իրենց իրավունքների եւ կատեգորիկ հանձնաժողովներին մասնակցելու անհրաժեշտության մասին, ինչպիսինն են Անգլերեն սովորողների խորհրդատվության հանձնաժողովը (ELAC) եւ Դպրոցի խորհուրդը (SSC): Հանդիպումը ճկուն է, որոշները առավոտյան են եւ որոշները ցերեկը կամ երեկոյան:

  o Մենք կազմակերպում ենք SSC եւ ELAC ամսեկան հանդիպումներ ամեն ուսումնական տարի, որպեսզի բացատրել եւ քննարկել հետեւյալը՝ ուսումնական ծրագիրը, բյուջեն եւ ուսանողի ուսումնական գնահատականը, ուսանողի հմտությունների ակնկալվող մակարդակը, եւ պարզել ծնողների արձագանքը այդ հանդիպումներին եւ Առաջին տիտղոսի ծրագրի բարելավումների ներդրումը: Հանդիպումների ընթացքում ծնողները պլանավորում, վերանայում են եւ առաջարկություն են կազմում ծնողների ներգրավվածության քաղաքականության համար:

  o GHS-ը բոլոր ծնողներին, ներառյալ խնամակալ ծնողներին, ապահովում է նյութերով եւ ուսուցմամբ, ինչպիսինն են A-G, Դպրոցավարությունը, Սկուլոջի-դպրոցավարում,եվ ծնողական

պորտալ, դպրոցի կայքը, ինչպես նաեւ մեծերի անգլերենի դասընթացները, համակարգչային հմտությունները, Իսպաներենի ՁԵԴ ծրագիր եվ այլն:

- Դպրոցը ներգրավում է Առաջին տիտղոսի ծնողներին դպրոցի Առաջին տիտղոսի ծրագրերի եւ Առաջին տիտղոսի ծնողների ներգրավվածության քաղաքականության բարելավման մեջ շարունակելիորեն եւ ժամանակին:

  - Շարունակելի շփումը հեշտացնելու համար GHS-ը կազմակերպում է կատեգորիկ եւ այլ հանդիպումներ, ինչպիսինն են Գիշեր Դետ Դպրոց, Բաց տուն, խորհրդատվության հանձնաժողովի հանդիպումներ եւ Սուրճ Առաջնորդի հետ, որպեսզի ծնողներին ապահովել տեղեկություններով շրջանի եւ դպրոցի ուսումնական քաղաքականության մասին, առաջիկա նահանգային եւ շրջանային գնահատումների մասին, իրենց երեխայի ուսումնական առաջադիմության մասին եւ ուսանողի ձեռքբերումների ակնկալիք մակարդակի մասին օրվա ընթացքում տարբեր պահերին:

  - Մենք կազմակերպում ենք Դպրոցի ղեկավարության ամսեկան հանդիպումներ, որտեղ դպրոցի գործողությունները քննարկվում են եւ քվեարկվում են: Դպրոցը Առաջին տիտղոսի ուսանողների ծնողներին  ժամանակին է տրամադրում տեղեկություն Առաջին տիտղոսի ծրագրերի մասին:

  - Մենք հաղորդակցվում ենք ծնողների հետ եւ ժամանակին տեղեկացնում ենք ամեն հանդիպման մասին ֆլայերների միջոցով, որոնք ուղարկվում են երեխայի հետ, եւ կատարվում են հեռախոսազանգեր Connect Ed-ի կամ Ծնողների կենտրոնի տնօրենի միջոցով: Այս ամենը արվում է իսպաներեն, հայերեն եւ անգլերեն:

  - Դպրոցի կայքը օգտագործվում է հանդիպումների, միջոցառումների, գործունեությունների եւ այլն մասին ծնողներին տեղեկացնելու համար ամսվա օրացույցի թարմացման միջոցով, ինչպես նաեւ ծանուցումներով: Դպրոցը Առաջին տիտղոսի ուսանողների ծնողներին տալիս է դպրոցում օգտագործվող ուսումնական ծրագրի, ուսանողի առաջադիմությունը որոշող գնահատականների բացատրություն եւ հմտությունների այն մակարդակների բացատրություն, որոնք ուսանողներից ակնկալվում են:

  - GHS-ը բոլոր ծնողներին, ներառյալ խնամակալ ծնողներին, ապահովում է նյութերով եւ ուսուցմամբ, ինչպիսինն են A-G, Դպրոցավարությունը, դպրոցի կայքը, Սուրճը Առաջնորդի հետ, Իսպաներենի ՁԵԴ ծրագիր, ինչպես նաեւ մեծերի անգլերենի դասընթացները, համակարգչային հմտությունները եւ այլն:

  - Ուսանողների առաջադիմության ամսաթիվը, դպրոցում օգտագործվող ուսումնական ծրագիրը, ուսանողների առաջադիմությունը որոշող գնահատականները եւ հմտությունների մակարդակները, որոնք ակնկալվում են ուսանողներից, ներկայացվում են եւ քննարկվում են խորհրդատվական հանձնաժողովի հանդիպումներին, Առաջնորդի հետ սուրճի ժամանակ, Առաջին կուրսեցիների կողմնորոշման հանդիպումների ժամանակ եւ այլն: Եթե Առաջին տիտղոսի ուսանողների ծնողները պահանջում են, դպրոցը տալիս է սիստեմատիկ հանդիպումների հնարավորություններ, որոնք թույլ են տալիս ծնողներին մասնակցել այն որոշումներին, որոնք վերաբերվում են իրենց ուսանողների կրթությանը:

  - Ծնողներին տրվում է հնարավորություն հանդիպել անձնակազմի հետ իրենց երեխաների կրթության վերաբերյալ, այցելելով գլխավոր գրասենյակը եւ նշանակելով հանդիպում անձնակազմի համապատասխան անդամի հետ:

  - Ծնողները կարող են զանգել կամ նամակ գրել անձնակազմի անդամներին, որպեսզի խնդրել անհատական հանդիպումներ:

<u>Բաժին II: ԿԻՍՎՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՐՁՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ</u>

U. S. Grant High School ծնողների միջեւ ամեն տարի տարածում է դպրոց-ծնող համաձայնագիր: Համաձայնագիրը, որը համատեղ կազմվել է ծնողների կողմից ու ուրվագծում էշ թե ինչպես են ծնողները, ամբողջ դպրոցի անձնակազմը եւ ուսանողները կիսելու ուսանողի ձեռքբերումները բարելավելու պատասխանատվությունը:

Դպրոց-ծնող համաձայնագիրը նկարագրում է հատուկ ճանապարհներ, ինչպես պետք է դպրոցն ու ընտանիքները համագործակցեն, որպեսզի երեխաներին օգնեն Նահանգի բարձր ուսումնական ստանդարտներին հասնել: Այն հասցեագրում է հետեւյալ օրինականորեն պահանջված հարցերը, ինչպես նաեւ այլ հարցեր, որոնք առաջարկվել են Առաջին տիտղոսի ուսանողների ծնողների կողմից՝

- Դպրոցի պատասխանատվությունը՝ տրամադրել բարձր մակարդակի ուսումնական ծրագիր եւ հրահանգներ սովորելու համար աջակցող եւ արդյունավետ միջավայրում, որը հնարավորություն է տալիս երեխաներին բավարարել ուսումնական առաջադիմության նահանգային ստանդարտներին:
- Այն ուղիները, ինչպես են ծնողները պատասխանատու լինելու իրենց երեխաների կրթությանը աջակցելու համար:

- Ծնողների եւ ուսուցիչների միջեւ շարունակելի հաղորդակցության կարեւորություն դիմելու, նվազագույնը՝ տարեկան ծնող-ուսուցիչ համագումարների միջոցով, հաճախակի հաշվետվությունները ուսանողական առաջադիմության վերաբերյալ, անձնակազմին դիմելու հնարավորություն, հնարավորությունները ծնողներին կամավոր մասնակցել իրենց երեխայի դասերին, եւ դասարանային գործունեությունները դիտել:

<u>Բաժին III: ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ</u>

U. S. Grant High School ծնողներին ներգրավում է դպրոցի հետ իմաստալից փոխազդեցության մեջ: Այն օժանդակում է անձնակազմի, ծնողների եւ հասարակության միջեւ գործընկերությանը, որպեսզի բարելավել ուսանողների ուսումնական նվաճումները: Այս նպատակներին հասնելու համար դպրոցը հաստատել է հետեւյալ աշխատանքները՝

- Դպրոցը ծնողներին ապահովում է աջակցությամբ նահանգի ուսումնական բովանդակության ստանդարտները, գնահատականները հասկանալու մեջ, եւ ինչպես հետեւել երեխայի առաջադիմությանը եւ աշխատել ուսուցիչների հետ, որպեսզի բարելավել իրենց երեխաների ձեռքբերումները:

  - Ծնողները տեղեկացվում են, եթե նրանց երեխան ուսումնական աջակցութան եւ միջամտությա կարիք ունի ուսուցման միջոցով՝ մինչեւ դպրոց կամ դպրոցից հետո, ինչպես նաեւ դպրոցական օրվա ընթացքում, նաեվ ունենք կրեդիտների վերականգնման ծրագիր:

  - Ծնողները ունեն իրենց դերը Գրանտ ավագ դպրոցի հավատարմագրման գործընթացի մեջ:

  - Ուսուցիչները պարբերաբար ծնողներին տրամադրում են ուսումնական առաջադիմության հաշվետվություններ, մոտավորապես ամեն հինգ շաբաթը մեկ եւ ըստ անհրաժեշտության:

- Դպրոցը ծնողներին ապահովում է նյութերով եւ ուսուցմամբ, որպեսզի օգնել նրանց աշխատել իրենց երեխաների հետ երեխաների առաջադիմությունը բարելավելու համար:

  - GHS-ը կազմակերպում է հանդիպումներ, որպեսզի ներկայացնի եւ բացատրի այնպիսի թեմաներ, ինչպիսինն են Բովանդակության տարածքի ձեռքբերման ստանդարտներ, նահանգային եւ շրջանային գնահատականներ, Առաջին տիտղոսի պահանջները, թե ինչպես հետեւել իրենց երեխայի առաջընթացին եւ ինչպես կապ հաստատել եւ աշխատել ուսուցիչների հետ, որպեսզի բարելավել իրենց երեխայի ուսումնական առաջադիմությունը:

  - GHS-ը գնահատում է ծնողների աջակցությունը եւ տեղեկացնում է ուսուցիչներին աշակերտական ծառայությունների անձնակազմին, առաջնորդներին եւ այլ անձնակազմին ծնողների գաղափարների մասին դպրոցի վերաբերյալ:

  - Մենք դիմում ենք եւ շփվում ենք մեր ծնողների հետ ինչպես հավասար գործընկերների: Ծնողների օգնությամբ՝ դպրոցը սովորեցնում է անձնակազմի անդամներին ծնողների աջակցության արժեքի մասին եւ ինչպես կապ հաստատել, շփվել եւ աշխատել ծնողների հետ ինչպես հավասար գործընկերների:

o Ծնողների ուսումնասիրությունների եւ կարիքների գնահատականը կտրվի ծնողներին, նրանց պատասխանը կօգտագործվի անձնակազմի հետ մասնագիտական զարգացման մեջ, հասկանալով ծնողների աջակցության արժեքը եւ ինչպես աշխատել նրանց հետ որպես հավասար գործընկերների:

- Դպրոցը համաձայնեցնում է եւ ինտեգրում է Առաջին տիտղոսի ծնողների ներգրավվածության ծրագիրը այլ ծրագրերի հետ եւ վարում է այլ գործունեություններ, ինչպիսինն են ծնողական ռեսուրսների կենտրոնները, որպեսզի խրախուսել եւ օգնել ծնողներին ավելի լիարժեք մասնակցել իրենց երեխաների կրթության մեջ:

  o GHS-ը ներկայիս ունի նվիրված Ծնողական կենտրոն, որը ծնողներին տալիս է գործիքներ, հնարավորություններ եւ ռեսուրսներ իրենց երեխաների կրթության մեջ ավելի լիարժեք մասնակցելը խրախուսելու եւ օգնելու համար:

  o Ծնողական Կենտրոնը ապահովում է սեմինարներ եւ դասընթացներ ծնողների անգլերենի տիրապետումը լավացնելու համար, ինչպես նաեւ համակարգչային հմտությունների մակարդակը, որպեսզի մեծացնել ծնողների մասնակցությունը եւ համագործակցությունը իրենց երեխաների կրթության մեջ:

  o Մենք տրամադրում ենք սեմինարներ եւ նյութեր ուսանողների ուսումնական առաջադիմությունը բարելավելու համար, ինչպիսինն է Ծնողական Ինստիտուտը, որը խրախուսում է ծնողներին ակտիվ մասնակցություն ունենալ իրենց երեխայի ուսումնական առաջադիմության մեջ, կարող են մասնակցել Իսպաներենի ՁԵԴ ծրագրին. Այլ սեմինարները կօգնեն ծնողներին անգլերենի, քաղաքացիության եւ ապահովության հարցերում, Սկուլոջի եվ Ծնողական Պորտալի գրանցումը ավարտականի պահնջարկները եվ ELՎերադասակարգման իրազեկում:

- Դպրոցը ծնողների միջեւ տարածում է տեղեկություն կապված դպրոցական եւ ծնողական ծրագրերի, հանդիպումների եւ այլ գործունեությունների հետ այն ձեւաչափով եւ լեզվով, որոնք հասկանալի կլինեն ծնողներին:

  o Մենք հաղորդակցվում ենք եւ ժամանակին տեղեկացնում ենք ծնողներին ամեն հանդիպման մասին ֆլայերների միջոցով, որոնք երեխաների միջոցով ուղարկվում են տուն, եւ կատարվում են հեռախոսազանգեր Connect Ed-ի կամ Ծնողական կենտրոնի տնօրենի միջոցով: Այս ամենը արվում է իսպաներեն, հայերեն եւ անգլերեն:

- Դպրոցը աջակցում է ծնողների ներգրավվածության գործունեություններին, որոնց մասին խնդրում են ծնողները:

  o Մենք հրավիրում ենքշ համաձայնեցնում ենք եւ ինտեգրում ենք ծնողներին դպրոցական նախագծերի մեջշ ինչպիսինն են՝ Խաղաղության այգինշ դպրոցի/ճամբարի արդիականացման նախագիծը եւ ծնողական կենտրոնի բարելավումը:

## Բաժին IV: ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

U. S. Grant High School տալիս է մասնակցության հնարավորություններ բոլոր ծնողներին, ներառյալ սահմանափակ անգլերենի իմացություն ունեցող ծնողները, հաշմանդամություն ունեցող ծնողները եւ թափառական ուսանողների ծնողները: Ինֆորմացիան եւ դպրոցական հաշվետվությունները տրամադրվում են այն ձեւաչափով եւ լեզվով, որը ծնողները կհասկանան:

- GHS-ը տալիս է հնարավորություններ սահմանափակ անգլերենի գիտելիքներ ունեցող ծնողներին (թարգմանիչներով հանդիպումների ժամանակ): Մենք տրամադրում ենք դասարանի խորհրդատուներ, դպրոցական հոգեբան եւ ծնողների օգնական ծնող-երեխա- դպրոց կոնֆլիկտները լուծելու համար:

- Մենք տրամադրում ենք դպրոցական հոգեբան ծնողներին օգնելու համար եւ գնահատելու երեխաներին Հատուկ Ուսումնական Ծառայությունների համար:

- Մենք տրամադրում ենք դպրոցական բուժքույր ուսանողների բուժ. օգնության համար:

- GHS-ը տրամադրում է սոցիալական ծառայություններից օգտվելու հնարավորություն հաշմանդամ ծնողներին եւ թափառական ծնողներին, որպեսզի օգնել նրանց հասնել լավագույն կրթությանը նրանց երեխաների համար:

- GHS-ը ծնողներին ներառում է ուսանողների առաջադիմության եւ ծնողների ներգրավվածության բարելավման նոր մոտեցումների վերանայման, թարմացման, ընդունման եւ իրագործման մեջ:

- Գրանտ Ավագ Դպրոցի կայքը (www.granths.org) եւ Դպրոցավարությունը (lms.lausd.net) ուսանողների Սկուլոջի (lms.lausd.net), վերահսկելու աշակերտների հանձնարարություններին եւ գնահատականներին հետեւելու համար:

Adapted from http://www.cde.ca.gov/la/pf/pf

◦ Approved by SSC: 11/15/2018